ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ, *Արդիականացման տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներ (պրոյեկցիա դեպի Հայաստան), Ե., «Լիմուշ» հրատ., 2016, 116 էջ:*



Հայ քաղաքական, քաղաքագիտական և հասարակական խոսույթում արդիականացումը հետին պլանում է: Շատ են խոսում կոռուպցիայի դեմ պայքարի, նաև տնտեսական զարգացման մասին, իսկ արդիականացման մասին խոսելիս սահմանափակվում են առանձին՝ տնտեսական, քաղաքական ոլորտներով: Մինչդեռ արդիականացումը համապարփակ և աշխարհայացքային երևույթ է: Այն ընդգրկում է հասարակական ողջ համակարգը: Արդիականացումից է կախված որևէ երկրի՝ զարգացած և քաղաքակիրթ պետությունների շարքում լինելու հնարավորությունը, քանզի միայն գիտելիքահեն տնտեսությունն է, որ կարող է քաղաքացիներին ապահովել արժանապատիվ կյանքով՝ հիմք դառնալով մշակութային ու ստեղծագործական վերելքի համար: Նկատի ունենալով այլ երկրների՝ արդիականացման հաջողված փորձը և հաշվի առնելով մշակութային ու քաղաքակրթական սեփական ներուժը՝ հարկավոր է մշակել տվյալ երկրի արդիականացման համար անհրաժեշտ մոդել, որը գուցե հետաքրքիր կլինի նաև այլ երկրների համար: Եվ այս առումով էլ առանձնանում է քաղաքագիտության դոկտոր, պրոֆ. Լևոն Շիրինյանի սույն մենագրությունը, որտեղ հեղինակը համակողմանի քննության է առնում գիտագործնական հիմնախնդիրները՝ մասնավորապես առաջարկելով արդիականացման այլընտրանքներ Հայաստանի Հանրապետության համար:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո հանրապետությունում ստեղծված հասարակական կարգը բնութագրվեց տնտեսական անկմամբ, հոգեզրկությամբ և բացասական այլ երևույթներով: Այս ամենի շարունակականությունը ժամանակի ընթացքում էլ ավելի բարդացրեց հասարակությունների զարթոնքը և նրանց մխրճեց նոր ճգնաժամերի մեջ: Այս իրավիճակից դուրս գալու համար կիրառվող պարզունակ հայեցակարգերը, կտրված լինելով ընդհանուր հասարակա-կան կյանքից, պարզապես տնտեսական զարգացման հայեցակարգերի մեխանիկական էքստրապոլյացիա են (արտարկում), որը, բնականաբար, որևէ դրական արդյունք չի տալու: Ճգնաժամի խորությունը այսպիսի հայեցակարգերով գրեթե անհնար է հաղթահարել: Ուստի անհրաժեշտ է մշակել մեկ այլ, ավելի համընդհանուր հայեցակարգ, որը կունենա այս հասարակություններին ճգնաժամից դուրս բերելու կարելիություն: Կարծում ենք՝ դա իրականացրել է հեղինակը, որը մենագրության մեջ ներկայացրել է արդիականացման ուշագրավ մի հարացույց:

Բավական հետաքրքիր հարցերի շարքում էական նշանակություն ունի Լ. Շիրինյանի հայեցակետը նշված հիմնախնդրի վերաբերյալ, այն է՝ արդիականացում՝ Արևելյան Ասիայի

(հիմնականում՝ կոնֆուցիական արեալի) երկրների փորձի միջոցով: Այս մոտեցումը նորարարական է ինչպես գիտագործնական, այնպես էլ՝ աշխարհայացքային տեսանկյունից: Մեր գիտական միտքը արդիականացման, տնտեսական զարգացման հարցերում առավելապես սևեռված է դեպի Արևմուտք: Մենագրությունը մեր հայացքն ուղղում է դեպի այլ երկրներ, որոնց արդիականացման փորձը շատ հետաքրքիր և կիրառելի է մեր երկրի համար:

Արդիականացման տեսության ուսումնասիրության համատեքստում պահպանողականությունը որպես արդիականացման կարևորագույն հիմք դիտարկելը բխում է աշխատանքի ընդհանուր տրամաբանությունից: Հեղինակն այն քննում է որպես ***արմատների վերադարձի*** *(ինդիգենացման) գործընթաց՝ համոզված, որ յուրաքանչյուր ժողովուրդ երբեմն հարկադրված է լինում կանգ առնել, շունչ քաշել և հանրագումարի բերել իր անցած ուղին, իմաստավորել այն և նշված հարցադրման լույսի ներքո՝ գնահատել քաղաքական գործընթացի ելևէջները: Եվ ինչպես իրավացիորեն նշում է ինքը՝ հեղինակը, «Քաղաքական գործընթացն է, որ բացահայտում է քաղաքական համակարգի շարժումը, բնաշրջումը (էվոլյուցիան), նրա վիճակի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ, որն իրենից ներկայացնում է քաղաքական տարբեր ենթակաների (սուբյեկտների) գործողությունների հանրագումարը, իրենց՝ իշխանության ոլորտում առանձնահատուկ գործառույթների իրականացման նպատակով» (էջ 4): Այս առումով կարևոր են մենագրության մեջ որոշ հանգուցային հասկացությունների իմաստաբանական հստակ տարանջատումը և դրանց դասակարգումը, որոնք հաճախ շփոթությունների պատճառ կարող են դառնալ, ինչպես, օրինակ՝ մոդիֆիկացիա (վերափոխություն), տրանսֆորմացիա (կերպափոխություն), մոդեռնիզիացիա (արդիականացում) հասկացությունները:*

Ուշագրավ է նաև ժողովրդավարության արևմտյան տեսությունների և ինդիգենացման միջև հեղինակի արած համեմատությունը, որի շնորհիվ հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի՝ արևմտյան քաղաքական մտածողության մեջ ինդիգենացումը դիտարկվում է որպես ժողովրդավարության պարադոքս, մինչդեռ այն բնական երևույթ է ոչ արևմտյան հասարակությունների, իրենց ինքնությունը պահպանել ձգտող և, ինչու չէ, պատմական անարդարությունները սրբագրել ցանկացող մշակութաստեղծ ժողովուրդների համար: Այս համատեքստում կարևոր է ընդգծել հեղինակի պնդումն առ այն, որ եթե ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններում «վերադարձի» շարժումն անմիջապես ստացավ հակախորհրդային, երբեմն նաև հակառուսական բովանդակություն, ապա ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում առաջնահերթությունը նվաճեց վառ արտահայտված ազգային-ազատագրական (հակագաղութային) շարժումը:

Մենագրության մեջ գիտական մեծ արժեք ունի արդիականացման երևույթի ուսումնասիրությունը՝ որպես փոխակերպվող հասարակության ալգորիթմ, որի շրջանակում հետազոտվում են արդիականացման ընկալումները պատմաքաղաքական տարբեր շրջափուլերում այդ գործընթացի առջև ծառացած մարտահրավերների տեսանկյունից: Այս առումով առանձնակի հիշատակության է արժանի հեղինակի այն պնդումը, թե՝ ճգնաժամային իրավիճակներում հայտնված ժողովուրդների՝ դեպի գալիք ելքի որոնումների խնդիրը քաղաքագիտության մեջ հանգեցրեց արդիականացման հարացույցի տեսական և պատմական տեսանկյունների նորովի իմաստավորմանը: Այս համատեքստում հեղինակը հստակեցնում է նաև արդիականացման տիպաբանությունը՝ մատնանշելով դրա քաղաքական, մշակութային, տնտեսական և

սոցիալական ենթատեսակների միջև հատկանշական տարբերություններն ու փոխառնչությունները:

Մենագրության մեջ Լ. Շիրինյանը քննության է առել նաև արդիականացման քաղաքագիտական խոսույթում առկա միտումները՝ համեմատական վերլուծության ենթարկելով արդիականացման տեսագործնական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող մի շարք հետազոտողների՝ Ա. Սոլովյովի, Գ. Սոկոլովայի, Թ. Պարսոնսի, Ս. Հանթինգթոնի, Ա. Գորդոնի, Վ. Կոզլովսկու, Ա. Ուտկինի և այլոց աշխատանքները: Հեղինակն այս ենթագլխում քննում է նաև արդիականացման գործում տնտեսության, քաղաքականության,մշակույթի, քաղաքակրթության և մի շարք այլ գործոնների նշանակությունը և փոխազդեցությունները:

Ներկայացնելով Չինաստանի, Վիետնամի, Հարավային Կորեայի, Թայվանի, Սինգա-պուրի, Հոնկոնգի արդիականացման մոդելները՝հեղինակն ավանդականի և արդիականի համադրումը բնութագրում է որպես արդիականացման յուրահատկություն «կոնֆուցիական մշակութային արեալում», որտեղ հաջողության են հասել Արևելյան Ասիայի այն երկրները, որոնք «առանձնանում են մշակութային վառ յուրահատկությամբ, պետականության սեփա-կան ավանդույթներով և տնական պատմությամբ»: Լ. Շիրինյանի կարծիքով, քաղաքական հարուստ մշակույթը հաջող արդիականացման առաջին պարտադիր պայմանն է (էջ 39):

Կարևորելով քաղաքական վարչակարգերի տիպաբանության, մասնավորապես, «կամիշխանության» (ավտորիտարիզմի)՝ որպես արդիականացման միջոցի հետազոտությունը՝ հեղինակը համապարփակ ձևով ներկայացնում է քաղաքական վարչակարգերի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց կապը քաղաքական մշակույթի և գիտակցության հետ: Նա բացահայտում է այն օրինաչափությունը, որ, բացառությամբ մերձբալթյան նախկին երեք հանրապետությունների, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անցումն ամբողջատիրական վարչակարգից դեպի ժողովրդավարություն տեղի է ունենում կամիշխանության հաստատման և հաղթահարման ճանապարհով: Տվյալ գործընթացի հաջողությունը պայմանավորվում է քաղաքագիտության զարգացման հաջողություններով, քանի որ քաղաքական վար-չակարգերի վերաբերյալ մշակված որակական բնութագրերը հանդես են գալիս յուրահատուկ չափորոշիչների դերում: Քաղաքագետը համոզված է, որ այս ճանապարհով է հնարավոր առավել լիարժեք ընկալել արդի քաղաքական գործընթացների էությունը և հասարակության արդիականացման համապատասխան մոդելներ մշակել:

Այսպիսով, տնտեսական զարգացման հարցերում գիտականորեն հիմնավորելով արդիականացման նշանակությունը՝ Լ. Շիրինյանը կարևորում է Արևելյան Ասիայի երկրների փորձը, որը Հայաստանի համար գործնականորեն ավելի դյուրին է իրագործել: Սա ոչ միայն նորարարական մոտեցում է, այլև ստեղծված իրավիճակից դուրս գալու իրական հնարավորություն:

ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ Է. Հ.
Քաղաքական գիտությունների թեկնածու
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Հ.
Քաղաքական գիտությունների թեկնածու